ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2 մարտի 2021 թվականի N 18

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման պահանջներով՝ ***որոշում եմ.***

1. Քաղաքացի Լյուդմիլա Վանուշի Մաչգարյանին տալ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Նոր Արտամետ համայնքի 0-րդ (ներկայում՝ 23-րդ) փողոց 49 հասցեում գտնվող 0.0963 հա բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում (ծածկագիր՝ 0024-0007, վկայական N 18062019-07-0056) բնակելի վերակառուցման շինարարության թույլտվություն:
2. Պարտավորեցնել Լյուդմիլա Մարգարյանին.
   1) շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ տեղեկացնել համայնքի ղեկավարին և քաղաքաշինական պետական կոմիտեին՝ համաձայն N 2-5 ձևի.
   2) մուծելու սահմանված տեղական տուրքը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ **ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2021 թվականի մարտի 2
գ. Նոր Արտամետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
2 մարտի 2021 թվականի N 19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի «Հայաստանի Հանրապետությունում շենքերի, շինությունների կամ դրանց մի հատվածի գործառնական նշակությունը փոփոխելու կարգը հաստատելու մասին» N 88 որոշումը և Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի ավագանու 2021 թվականի փետրվարի 23-ի N 12 որոշման 6-րդ կետը՝ ***որոշում եմ.***

1. Նոր Արտամետի համայնքային սեփականությաուն հանդիսացող (սեփականության իրավունքի վկայական N 2200602) 188.0 քմ հասարակական նշանակության վարչական շենքի նպատակային նշանակությունը փոփոխել արտադրական նշանակության՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակությամբ շենքի:
2. Նոր Արտամետի համայնքային սեփականությաուն հանդիսացող (սեփականության իրավունքի վկայական N 2253094) 89.8 քմ հասարակական նշանակության շինությունների նպատակային նշանակությունը փոփոխել արտադրական նշանակության՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակությամբ շենքերի:
3. Նոր Արտամետի համայնքային սեփականությաուն հանդիսացող (սեփականության իրավունքի վկայական N 2253093) 3097 քմ հասարակական նշանակության շինությունների նպատակային նշանակությունը փոփոխել արտադրական նշանակության՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակությամբ շենքերի:
4. Նոր Արտամետի համայնքային սեփականությաուն հանդիսացող (սեփականության իրավունքի վկայական N 2253096) 44.9 քմ հասարակական նշանակության շինության նպատակային նշանակությունը փոփոխել արտադրական նշանակության՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակությամբ:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ **ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2021 թվականի մարտի 2
գ. Նոր Արտամետ